



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

“ 11 ” հունվարի 2011թ.

№ 2 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԵՂԵԳԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 և 1.16 կետի ա) ենթակետով, կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

1. 2011թ. հունվարի 12-ից լուծել <<Եղեգի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սմբատ Ստեփանյանի հետ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված N 21 աշխատանքային պայմանագիրը, նրա մահվան կապակցությամբ:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 127-րդ հոդված, Ս.Ստեփանյանի մահվան վկայականի պատճենը:

2. 2011թ. հունվարի 12-ից ՀՀ Սյունիքի մարզի <<Եղեգի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Մերի Գանդալյանին:

Հիմք՝ Մ. Գանդալյանի անձնական դիմումը:

3. Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Կողմանով Կառլեն	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Հարությունյան Գայա	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ մասնագետ
Վարդապարյան Սիլվա	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ
Գանդալյան Մերի	<<Եղեգի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար (ընդունող)

4. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնում-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

5. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:



Ս.ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
2011թ. հունվարի 11
ք. Կապան